ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.01
<<ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18>>

ք. Երևան «31» 01 2018 թ.

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ-ն, ի դեմս Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ավիաբուժ» բ/կ ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության գործադիր տնօրեն Լ.Ղազարյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է բժշկական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1, N 1.1 N 1.2 և N 1.3 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1, N 1.1 N 1.2 և N 1.3 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1, N 1.1 N 1.2 և N 1.3 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1, N 1.1 N 1.2 և N 1.3 հավելվածներով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1, N 1.1 N 1.2 և N 1.3 հավելվածներով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված <u>հինգ</u> աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է

վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը չի չի կարող գերազանցել 55 000 000 (հիսունհինգ միլիոն) ՀՀ դրամը: Մատուցվող ծառայությունների սակագները ներկայացված են Պայմանագրի N 1.2 և N 1.3 հավելվածներում: Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ մինչև հաջորդ ամսվա 5-րդ աշխատանքային օրը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1, N 1.1 N 1.2 և N 1.3 հավելվածներում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված

համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Պատվիրատու»	«Կատարող»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ	<<Ավիաբուժ>> բ/կ ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ	ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33	Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	Հ/Հ 193003450205
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ	<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 01216144	ՀՎՀՀ 01227131
Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**	**Գործադիր տնօրեն** _____ **Լ.Ղազարյան**
ստորագրություն՝	ստորագրություն՝Կ.Տ

Հավելված N 1.1
«31» 01 2018 թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18 *ծածկագրով թիվ 2.01 պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1. Կատարողը պարտավորվում է համաձայն «Ավիացիայի մասին» և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 27-ի N 944-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի մարտի 03-ի N347-Ն հուլիսի 15-ի N1089-ն որոշման, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի «Բժշկական զննման արդյունքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բնագավառում բժշկական սերտիֆիկատների հատկացման մասին» N 301Ն հրամանի, ԻԿԱՕ-ի գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջների և իրավական այլ ակտերի, կատարել Պատվիրատուի» աշխատողների բուժ. սպասարկում (առողջության առաջնային պահպանում, պարտադիր, նախնական և պարբերական բժշկական քննություններ և փորձաքննության նպատակով հետազոտություններ, ամենօրյա նախահերթափոխային բուժ. զննումներ, հիգիենիկ-հակահամաճարակային միջոցառումներ, ռեկրեացիոն և ռեաբիլիտացիոն բուժումներ, բուժ. կանխարգելիչ գործունեությունն, ԴԴԴ աշխատանքներ և այլ բժշկական ծառայություններ):

2. Կազմակերպել և կատարել կարգավարական անձնակազմի նախնական, պարբերական և նպատակային բժշկա-թռիչքային փորձաքննություն՝ տալով համապատասխան վավերագրեր: Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության պետի «Բժշկական զննման արդյունքում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ավիացիայի բնագավառում բժշկական սերտիֆիկատների հատկացման մասին» N 302-Ն հրամանի համաձայն կարգավարների տարեկան բժշկական պարտադիր հետազոտման ծավալը կազմում է 59 հետազոտություն:

3. Կատարել այլ աշխատողների նախնական, պարբերական, պարտադիր հետազոտություններ, առողջության առաջնային պահպանման նպատոկով՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հուլիսի 15-ի N1089-ն որոշման, ԻԿԱՕ-ի գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջների և իրավական այլ ակտերի: Վերգետնյա սպասարկող անձնակազմի տարեկան բժշկական պարտադիր հետազոտման ծավալը կազմում է 15 հետազոտություն:

4. Կատարել Պատվիրատուի աշխատողների նախահերթափոխային հետազոտություններ:

Անհետաձգելի և շտապ անվճար բուժ. օգնություն ցույց տալ Պատվիրատուի բոլոր աշխատողներին:

5. Պատվիրատուի կարգավարական անձնակազմի համար կազմակերպել ռեկրեացիոն և ռեաբիլիտացիոն միջոցառումներ, որը արտահայտված է 3.1.կետի հետազոտման ծավալում:

6. Տարափոխիկ և հատուկ վտանգավոր հիվանդություններ հայտնաբերելու դեպքում Պատվիրատուի աշխատողներին, ծառայություններում և օբյեկտներում շտապ կերպով կատարել կանխարգելիչ և հակահամաճարակային համապատասխան միջոցառումներ (պատվաստումներ, մանրէաբանական, սեռոլոգիական հետազոտություններ, դեզնֆեկցիոն և այլ աշխատանքներ):

7. Կատարել պատվիրատուի տարածքների ԴԴԴ աշխատանքներ:

8. Պատվիրատուի աշխատողների համար կազմակերպել հիվանդությունների ախտորոշում և բուժում՝ ապահովելով համապատասխան դեղորայքով (բացի ստոմատոլոգիական օրտոպեդիայից):

9. Բուժման և բժշկական ստուգումների ժամանակ «Կատարողի» մեղքով վարակված կամ առողջությունը վնասված Պատվիրատուի աշխատողները բուժվում են «Կատարողի» կողմից անվճար:

«Պատվիրատու»	«Կատարող»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ	<<Ավիաբուժ>> բ/կ ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ	ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33	Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	Հ/Հ 193003450205
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ	<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 01216144	ՀՎՀՀ 01227131
Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**	**Գործադիր տնօրեն** _____ **Լ.Ղազարյան**
"ստորագրություն"	"ստորագրություն" Կ.Տ

Հավելված N 1.2
« 31 » 01 2018 թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18 *ծածկագրով թիվ 2.01 պայմանագրի*

Մատուցվող բժշկական ծառայությունների սակագները

	Բժշկական հետազոտություններ	**Քանակ՝** մարդ/ժամ	**ԳԻՆԸ**
1.	ԱԲՓ	1	15000
2.	Թերապևտ	1	7000
3.	Նյարդաբան	1	7000
4.	Ակնաբուժ	1	9000
5.	ՔԿԱ	1	7000
6.	Վիրաբույժ	1	7000
7.	Մաշկաբան	1	7000
8.	Գինեկոլոգ	1	7000
9.	Հոգեբան	1	7000
10.	Ուրոլոգ	1	10000
11.	Հոգեբուժ	1	10000
12.	Ստոմատոլոգ	1	6000
13.	Գաստրոսկոպիա	1	8000
14.	Սրտաբան	1	7000
15.	R-սկոպիա, R-գրաֆիա	1	8000
16.	ԷՍԳ մոնիտորինգ	1	10000
17.	Արյան ընդհանուր անալիզ	1	4000
18.	Մեզի ընդհանուր անալիզ	1	3000
19.	Արյան բիոքիմիական անալիզ	1	15000
20.	ԷՍԳ	1	4000
21.	ՈւՁՀ որովայինի խոռոչի	1	10000
22.	ՈւՁՀ փոքր կոնքի	1	5000
23.	ԷԷԳ	1	7000
24.	Աուդիոմետրիա	1	4000
25.	Ֆլյուրոգրաֆիա	1	3000
26.	Սպիրոմետրիա	1	4000
27.	Վելոէրգոմետրիա	1	8000
28.	Ռեկրեացիա՝ 1 ժամ	1	6000
29.	**Նախահերթափոխային ստուգում**	1	2700

30.	**Վերգետնյա աշխատողների ստուգում**	1	40000
31.	**Դեզինսեկցիա**	1	1700
32.	**Դեռատիզացիա**	1	1300
33.	**Դեզինֆեկցիա**	1	1300

«Պատվիրատու»

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**
ստորագրություն

«Կատարող»

<<Ավիաբուժ>> բ/կ ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 193003450205
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 01227131

Գործադիր տնօրեն _____ **Լ.Ղազարյան**
ստորագրություն՝Կ.Տ

Հավելված N 1.3
« 31 » 01 2018 թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18 ծածկագրով թիվ 2.01 պայմանագրի

Կարգավարներին բժշկական սերտիֆիկատների հատկացման համար
մատուցվող ծառայությունների սակագները

Բժշկական հետազոտություններ		**Կին**	**Տղամարդ**
		գին	գին
1.	ԱԲՓ	15000	15000
2.	Նյարդաբան	7000	7000
3.	Ակնաբուժ	9000	9000
4.	ՔԿԱ	7000	7000
5.	Վիրաբույժ	7000	7000
6.	Մաշկաբան	7000	7000
7.	Գինեկոլոգ	7000	0
8.	Հոգեբան	7000	7000
9.	Արյան ընդհանուր անալիզ	4000	4000
10.	Մեզի ընդհանուր անալիզ	3000	3000
11.	Արյան բիոքիմիական անալիզ	15000	15000
12.	ԷՍԳ	4000	4000
13.	ՈւՁՀ որովայինի խոռոչի	10000	10000
14.	ՈւՁՀ փոքր կոնքի	5000	5000
15.	ՈւՁՀ վահանաձև գեղձի	5000	5000
16.	ԷԷԳ	7000	7000
17.	Աուդիոմետրիա	4000	4000
18.	Ֆլյուրոգրաֆիա	3000	3000
19.	Սպիրոմետրիա	4000	4000
20.	Վելոէրգոմետրիա	8000	8000
21.	Ռեկրեացիա՝ 24 ժամ	144000	144000
	Ընդամենը	**282000**	**275000**

* Վերոնշված բժշկական հետազոտությունները անցնում են այն կարգավարները, որոնք չունեն ախտորոշում:

Այն կարգավարները, որոնք ունեն առողջական խնդիրներ, կանցնեն լրացուցիչ հետազոտություններ, համաձայն հավելված 1 սակագների, ըստ ախտորոշման:

«Պատվիրատու»	«Կատարող»
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ	<<Ավիաբուժ>> բ/կ ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ	ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33	Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	Հ/Հ 193003450205
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ	<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 01216144	ՀՎՀՀ 01227131
Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**	**Գործադիր տնօրեն** _____ **Լ.Ղազարյան**
ստորագրություն¤	ստորագրություն¤Կ.Տ

Հավելված N 2

« 31 » 01 2018 թ. կնքված

ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18 *ծածկագրով թիվ 01 պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության														
համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
	85121100	Բժշկական ծառայություններ	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի	Փաստացի ոչ ավել քան՝ 55 000 000 ՀՀ դրամ

«Պատվիրատու»

<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ <<Զվարթնոց>> մ/ճ
ՀՎՀՀ 01216144

Գլխավոր տնօրեն _____ **Ա.Գասպարյան**
ստորագրություն¤

«Կատարող»

<<Ավիաբուժ>> բ/կ ՓԲԸ
ք.Երևան-0042, <<Զվարթնոց>> ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 193003450205
<<Կոնվերս Բանկ>> ՓԲԸ
ՀՎՀՀ 01227131

Գործադիր տնօրեն _____ **Լ.Ղազարյան**
ստորագրություն¤Կ.S

Հավելված N 3
« 31 » 01 2018 թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18 *ծածկագրով թիվ 2.01 պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
_____	_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____ և
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին .
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
« 31 » 01 2018 թ. կնքված
ՀԱՆ-ՄԱԾՁԲ-02/18 *ծածկագրով թիվ 2.0 պայմանագրի*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն